

Նախկինում Ղզլտրի հայերը տպրում էին նահապետական կյանքով, այսինքն ընտանիքը զբաղված էր տան ամենատղիվարձ՝ սպառ կամ տատր: Ընտանիքի բոլոր անգամները մեծ հարդանք ու պատկանանք էին տածում իրենց պապի նկատմամբ, որին անվանում էին: «տղա»: Առավախյան բարեկիս կամ գիշերը հրաժեշտ տալիս բոլորը մոտենում էին պապին և տջը համրուելով ասում՝ «պարի լույս աղա», «պարի դիշեր, աղա», նա սովորաբար ժպտադեմ նրանց օրհնում էր, փոքրերին համրուում ու ճանապարհ գնում: Ընտանիքում ընթացիկին պահպանվում էր ավագության կարգը՝ պապը նստում էր սեղանի զբաղված: Նրանից առաջ ոչ ոք չէր նստում: Նրա խոսքը ընդհատելը անխոհեմություն էր: Եթե ընտանիքի մեծ անդամներից որեէ մեկը նրա խոսքը չկատարեր, նա բարկանում և ստիպում էր իր աստծն անել: Ընտանիքում բոլոր կնճոռա հարցերը, վեճերը լուծվում էին միայն պապի դիտությունով:

Ավագ տանտիրուհին բոլոր հարցերով դիմում էր տան ավագին: Միայն ավագ աստիտուհին ունեն իրավունք ճաշի սեղան նստել աղամարդկանց հետ: Տանտիրուհին ավագի հետ խորհրդակցում էր տան կարիքների, որևէ իր, շորացու, ապրանք, մթերք գնելու, ծախելու, ձմեռվա պաշար անելու, կենցաղային և տնտեսական այլ հարցերի մասին: Տան անտեսությունը տարվում էր ավագ աստիտուհու անմիջական հսկողությամբ և նրա անմիջական մասնակցությամբ: Ավանդույթով գիտեին թե ինչ պիտի անի ավագ հարսը, երկրորդը, կրասերը, տան աղջիկները: Ավագ հարսը աստիտուհու անմիջական օգնականն էր և նրա բացակայության կամ հիվանդության ժամանակ փոխարինում էր նրան: Տանտիրուհու մոտ էին գտնվում տան բոլոր բանալիները: Տանտիրուհին էր ձմեռվա երկար գիշերներին «իմաստուն» հեքիաթներով զբաղեցնում թոռներին, որդու կամ թոռան համար աղջկա ընտրություն կատարում: Նրանից էին առաջինը խնդրում աղջկա կամ աղջիկ-թոռան ձեռքը: Տանտիրուհու մահվանից հետո, նրա պարտականությունները անցնում էին ընտանիքի մյուս ավագ կնոջը: Ընտանիքի անգամները իրենց աշխատավարձը դնում էին ընդհանուր գանձարկղը, որի կարգադրիչը ավագ տանտիրուհին էր:

Ուրտիալի էր հատկապես տղա ղավակի ծը-

նունգը: Ամեն մի ընտանիքում լինում էր 8—12 երեխա: Մեծ գոթախտություն էր շրերությունը: Տնեցիք և աղագականները կշտամրանքով էին դիմում այդպիսի հտրսներին: Ստկայն Ղզլարում գերգաստաններ (50—70 հոգի) չկային: Երբ ընտանիքը շատ էր մեծանում, այսինքն՝ եղբայրները մեկը մյուսի հետեից ընտանիք էին կաղմում, նրանցից յուրաքանչյուրը (բացի ավագ եղբորից, որը մնում էր հայրական տանը) իրենց բակում, եթե հողատարածությունը թույլ էր տալիս, իրեն համար տանձին տուն էր շինում: Իսկ եթե բակում նեղվածք էր, ապա նոր ամուսնացած եղբայրը որոշ ժամանակ ապրում էր եղբայրների հետ, մինչև նրա համար ընդհանուր օգնությամբ տուն գնեին կամ կառուցեին քաղտքի մեջ: Սա գարծել էր սովորույթ և հարցը վերջանում էր գրեթե առանց բարդացնող հետևանքների:

Բաժանումը կտարվում էր հետեյալ կերպ. նախ առանձնացնում էին հարսների օժիտը, որը նրանց անձնական սեփականությունն էր, ապա բաժինք հանում շամուսնացած աղջկա և մոր համար: Մնացած շարժական և անշարժ գույքը քահանայի ներկայությամբ հավասար բաժանվում էր եղբայրների միջև: Մայրը մնում էր որդիներից մեկի մոտ՝ ըստ իր ցանկության:

Հայկական քաղաքացիական օրենքի համաձայն, եղբոր մահվանից հետո նրա բաժինը անցնում էր կենդանի եղբորը, որը պարտավորվում էր խնամել այրի կնոջը և նրա երեխաներին՝ մինչև աղջիկների տնտեսանալը կամ աղաների չափահասությունը, բրից հետո միայն որդիներն էին տնտեսանում հայրական գույքը: Հանգուցյալ եղբոր ընտանիքի խնամակալության հարցը վճարվում էր ավանգության իրավունքով՝ հայկական «գտտարանով», հետո միայն հաստատվում քաղաքային վարչության և նոսարի կողմից:

Արյունակցության աստիճանը Ղզլարում այսպես էր: Աղագականների միջև ամուսնությունը թույլատրվում էր յոթերորդ պոբաից հետո: Մոտիկ ազգականների ամուսնությունը բացառիկ երևույթ էր, այն էլ միայն կաթողիկոսի թույլտվությամբ:

¹ Հիշվում է հետեյալ դեպքը. դարիս սկզբին երկու եղբայր ցանկացան ամուսնանալ երկու քույր հետ: Սակայն լուսավորչական եկեղեցին այդ ամուսնությունը չթույլատրեց.

Որգեգրել կամ հոգեղավակ վերցնել կարելի էր, եթե նրանք արյունակիցներ չունեին: Սովորաբար արյունակիցները թույլ չէին տալիս, որ իրենց, մանավանդ, տղայ՝ ազգակիցը որգեգրվի ուրիշի կողմից: Աղջկա նկատմամբ հեռուողական չէին, որովհետեւ աղջիկ դավակր հոր ժառանգությունից բաժին չունեի: Պատահել է, որ հոգեղավակ վերցրած աղջկան պահելուց, մեծացնելուց հետո ամուսնացրել են իրենց ընտանիքի որևէ տղայի հետ: Արու դավակ չունեցողները հոգեղավակ էին վերցնում աղջկակիցներից, այդ օջախը չհանգցնելու, անժառանգ չթողնելու համար: Հոգեղավակին պահում էին իսկական դավակի նրման: Որգեգրված աղջկա հետ ամուսնանալը մեղք էին համարում:

Ղզլարում տնտեսայությունը ընդունված չէր, գա անպատվարներ էր համարվում: Եթե նույնիսկ փեսան անղացի չէր և ղզլարցի աղջիկ էր ուղել, անպատվան պիտի սենյակ վարձեր և այնտեղ բերեր իր կնոջը: Աղջիկը իր հայրական առն ղնում էր և գա չէր արդելվում, ըստ ղնում էր արդեն որպես հյուր:

Ամուսինները իրար կանչելիս անունները չէին տալիս: Կինը կասեր՝ «մարդ», իսկ մարդը՝ «ա կնիկ»: Երեխաները մորը դիմելիս ասում էին՝ «մայրիկ կամ մամա», հորը կանչում էին՝ «հայրիկ կամ պապա», տատին՝ «բարա», պապին՝ «աղա», մորաքրոջը՝ «մամիդա» կամ «տոտա», հորեղորը՝ «դադա»: Օտար ասանց մարդուն՝ «բիձա»:

Երբ խոսում էին մեկի մասին, նրա անունը չէին տալիս, այլ ասում էին այսինչի տղեն, այնինչի աղջիկը: Իսկ եթե այդ մեկը ուներ մականուն, անվանում էին մականվամբ: Աղջանունները շատերին հայտնի չէր, իսկ մականունները հայտնի էին ամբողջ քաղաքին:

Խորթ դավակ էին համարվում այն մայրերի երեխաները, որոնք կրկին ամուսնացած մոր հետ էին գալիս: Նման կամ առանց դավակի կրկին ամուսնացող կնոջից ծնված երեխաները հարազատ էին համարվում և ունեին նույնպիսի իրավունքներ, ինչպես առաջին կնոջից ծնված երեխաները:

Կինը ժառանգական իրավունքներից ղուրկ էր, շարժական ու անշարժ գույքից բաժին սա-

նալու իրտվունք չունեի: Առհասարակ, հարսնացու աղջիկը հոր տանը ժամանակավոր «հյուր» էր, որովհետեւ ամուսնանալու էր ու հեռանար: Սակայն եթե մեծած ամուսինը իր կենդանության ժամանակ ըստանվել էր հորից և եղբայրներից, ապա նրա կինը անօրինում էր ունեցվածքը, շարժական ու անշարժ գույքը: Նորից ամուսնանալու դեպքում, նա կարող էր աղջկան և միայն անձնական գույքը տանել նոր ամուսնու առնու: Իսկ տղան մնում էր հոր տանը, տնօրինելով անշարժ ու շարժական գույքը: Եթե նա փոքր էր, մնում էր խնամակալության ներքո, մինչև շահահաս գտնալու: Եթե այրի կինը ցտնկանում էր ամուսնանալ, նա իր միտքը պետք է հայտնեի ծնողներին, սրտը էլ երրորդ անձի միջոցով սկսեցողը կամ սկսարային՝ խնդրելով նրանց համաձայնությունը: Համաձայնություն ստանալու դեպքում, նա երեխաներից կարող էր իր հետ տանել միայն աղջիկ դավակին: Նորից ամուսնացող կնոջ հարսանիքի ծախսերը կատարում էին նոր ամուսնու հայրն ու եղբայրները: Երբեմն սիրված և հարգված, սակայն այրիացած հարսի նոր ամուսնության հարսանիքին ցանկություն էին հայտնում մասնակցելու նախորդ ամուսնու մոտ հարազատները: Նախորդ ընտանիքի ոչ մի անդամ իրենց տան այրիացած կնոջ հետ չէր ամուսնանում: Եթե պատահել են այդպիսի դեպքեր, կամ թե, վախճանված աղջկա ամուսնուն ամուսնացրել են մյուս աղջկան, ապա միայն հաշվի առնելով երեխաների վիճակը խորթ հոր կամ մոր առկայության դեպքում:

Ամուսինների ըստանման դեպքեր Ղզլարում եղել են: Եթե տեղական հողերը խորհուրդը ապահարդան չէր ասալիս, դիմում էին թեմական խորհրդին, մերժման դեպքում՝ հայոց հողերը սինդիկին:

Վերաբերմունքը անառակ մարդկանց, մանավանդ անառակ կանանց հանդեպ շահազանց խիստ էր: Եթե մի որեէ հայ կնոջ կամ աղջկա մասին քաղաքում վատ համարվ տարածվեր, մեկ կամ երկու օրվա ընթացքում դիջերով այդ աղջկա կամ կնոջ տան պատերը կներկվեին ձյութով, որ ծայրահեղ խայտառակություն կնշանակեր:

Մանուկների դաստիարակության դործը նահապետական հիմունքների վրա էր դրված, որի մեջ խոշոր դեր էր խաղում նաև համայնքը: Համայնքի դրված և շղթված օրենքները նրանց հանդեպ կատարվում էին սրբություններ: Այդ օրենքները

չնայած ամուսնացողների միջև ազգակցական կապ չկար: Ստիպված, սիրող գույքերը գնացին Վլադիկավկազ և, առանց կաթոլիկություն ընդունելու, պսակվեցին կաթոլիկ եկեղեցու:

ոանահարողներին հասարակութիւնը դատապարտում էր:

Մինչև 6—7 տարեկան տղաներն ու աղջիկները միասին էին խաղում: Դրանից հետո բաժանում էին: Փոքր հասակից աղջիկներին վարժեցնում էին տնային աշխատանքի՝ տունը հավաքել, ջուր բերել, ճաշ պատրաստել, լվացք անել, իրենցից այլևի փոքրերին նայել: Նրանք էին սպասավորում հյուրերին, սովորում կարել, կարկատել, գուլպա դործել, ձեռագործել և այլն:

Տղաներին սովորեցնում էին դրսի աշխատանքի՝ այգեգործական, առևտրական, որևէ արհեստի և այլն: Հայ ընտանիքում տղան համարվում էր տան սյունը: Երբ տղա էր ծնվում, ծնողների ուրախութիւնը անսահման էր, իսկ աղջկա դեպքում, մանավանդ եթե անընդմեջ էին, ծնողները սկսում էին հուսահատվել և դիմել «գորբացներին» ու «փալչիներին», սրբերի ոտքն էին ընկնում, աղաչում, խոստումներ անում, որ ասաված իրենց մի արու գավակ սլարգբի: Եվ երբ վերջապես աղա էր ծնվում, ծնողները մատաղ էին անում, քեֆ սարքում և ուրախանում: Անում էին ամեն ինչ, որ նա չհիվանդանա, շար աչք չկպչի նրան: Անդրանիկ տղայի ամեն մի ցանկութիւնը կատարում էին, երես էին տալիս: Անդրանիկ որդին աղատ էր դիտարկութիւնից:

Հարեանութիւն մեջ այսօր էլ պահպանվում են լավ ավանդութիւններ, որոնք դալչս ևն հին ժամանակներից: Հարեանները իրող հեա կապված են բարեկամական սերա կապերով: Առածներ կան՝ «Առաջ հարեան ձեռք բեր, հետո տուն առ, կամ լավ հարեանը վաա աղղականից լավ է»: Հարեանները միմյանց ջաա բանում են օգնում, օրինակ՝ նոր աուն շինելիս, կարիքի ժամանակ դրամտկան օգնութիւնը, ասանիկնոջ հիվանդանալու դեպքում նրա ընսանիքի պեաքերը հողալով, ճաշ պատրաստելով, լվացք անելով և այլն: Եթե մի բան է հարկավոր, որ ասան չկա, հարեանից են վերցնում, հետո ունենալու դեպքում ե՞րբ վերադարձնում, չնչին բաները կարող են և չվերադարձնել: Նույն բարի հարեանութիւնը դոյութիւն ունեն և հարեան այդեակերի մեջ: Եթե նրանցից մեկը մի որևէ գործիքի կամ ինչ-որ առարկայի պեաք ուներ, անպայման իր հարեանից կվերցնել: Աա էլ աեղն եկած ժամանակ նրան կօղներ մի որևէ բանով: Հարեանները միասին էին կաաարում առնախմբութիւն կամ ուրիշ արարողութիւն: Նրանց մեջ վեճեր էլ էին ծաղում: Երբեմն դրանք երկու

կողմից այնքան էին սրվում, որ հասնում էր տուր ու դմփոցի, իրար մաղեր պոկելու, անպատիվ խոսքերի: Բայց մեծ մասամբ, ի վերջո, վերականգնվում էին դրացիական նորմալ հարաբերութիւնները:

Հաշտութիւն աոիթները սովորաբար մեծ տոներն էին լինում՝ դատիկը, ջրօրհնեքը, հաղորդումը, որից առաջ, ըստ քրիստոնեական հավատքի, մարդ պիտի մտքովեր իր մեջ եղած բոլոր պղտոր մտքերից ու դժացումներից: Խոտված հողով հաղորդութիւն (կամ ճաշակ) ընդունելը մեծ մեղք էր համարվում:

«Հացի հյուրասիրութիւնը» հայանի է ամենուրեք: Հյուր ընդունելը մեծ պատիվ է հայ մարդու համար՝ «Տուող բաց անողը, ով էլ որ իլլի, ասուու դոնաղն ա» ասում էր Ղլարի առածը: Տանտերը հյուրին ամենապատվավոր տեղն է տալիս իր օջախում, մաքուր անկողնում պոկեցնում, տան բոլոր անդամները իրենց ուշադիր վերաբերմունքով պիտի սպասարկեն հյուրին, ասան հարսը պիտի լվանա հյուրի ոաքերը, որ նմանապես շաա հնուց եկած սովորութիւն է հայերի մեջ: Հյուրին ճամփա դնելիս, ասաները նրան ուտելիքի պաշար է տալիս: Մուրացկանը, որը հայի աուն էր դալիս և օգնութիւն խնդրում, երբեք դատարկ ձեռքով չէր հետսնում: Մեկը նրան հաց էր աալիս, մյուսը՝ ճաշ, երրորդը՝ դրամ, հագուստ և այլն:

Ղլարում ապրող հայերի և այլ աղղերի փոխհարաբերութիւնը, ինչպես նշվել է, միշտ էլ եղել է բարեկամական: Դա վերաբերում է ոչ միայն քրիստոնյա աղղերին՝ ոուսներին, կաղակներին, վրացիներին, այլև հրեաներին, կումիկներին, թաթարներին, պարսիկներին, նողայներին և այլն: Ընդհարումներ կրոնական հողի վրա չեն հիշվում:

Աւուսնութիւն և հարստեմբ: Երբ տղան ու աղջիկը հասունանում էին, ծնողների վերաբերմունքը հայ ընսանիքում հաակապես աղջիկների նկամամբ փոխվում էր: Ջահել աղջիկները մըտական հսկողութիւն տակ էին դանվում: Աղջիկն իր ընկերուհիների հեա դրոսանքի կարող էր դնալ միայն ծնողների թույլատիւթիւնը: Նա չպեաք է ուշանար կամ մենակ վերադառնար: Աակայն դա չէր նշանակում, որ ուրիշ աոիթներ չկային աղաների ու աղջիկների հանդիպումների համար: Մեծ աոներին, հարսանիքներին, տոնախմբութիւններին և ուխաաղնացութիւն ժամանակ սաեղծվում էին այդպիսի հնարավորութիւններ:

Ս. Գևորգ ուխտատեղին, օրինակ, ուր առնե-
րին մնում էին մի քանի օր, հանդիպումների հա-
մար հարմար վայր էր: Այստեղ աղջիկները խմբե-
րով, տոնական պոետներով ու ծաղկեփնջերով
դարձարված, զբոսնում էին վանքի շինարների
հովանու աակ: Տղաները ձգտելով դուր դալ աղ-
ջիկներին, յուրաքանչյուրը յուրովի աշխատում էր
դրսևորել իր ջնորհքը, ջոկվել մյուսներից մի որևէ
լավ արարքով: Տեղի էին ունենում ծանոթություն-
ներ, սիրահարվում էին, խոսատումներ տալիս միմ-
յանց: Սակայն ծնողների կամքն օրենք էր դա-
վանների համար:

Ծնողները կարող էին նպաստել իրենց աղջկա
կամ տղայի տեսակցություններին, աալ իրենց
համաձայնությունը և ամուսնացնել և, հակա-
ռակը, ամեն կերպ խանդարել, համողելով նրանց
ընթացալի անհամապատասխանությունը՝ սոգեղու-
թյամբ, «քեսիրություն» և այլն, թելադրել իրենց
կամքը, ցանկությունը՝ ամուսնանալ իրենց ընտ-
րածին:

Հարսնախոսություն կառարում էր աղայի
մայրը, որը մինչև այդ խորհրդակցում էր իր ամուսնու
ու մոտիկ ազդականների հետ, տեղեկու-
թյուններ էր հավաքում աղջկա առողջության,
ընավորության, դեղեցկության և, որ ամենազլխա-
վորն է, նրա ծնողների կարողության մասին: Ի-
րենց հերթին աղջկա ծնողներն էլ հետաքրքրվում
էին տղայի հնարավորություններով: Հետո աղջկա
ծնողներին միջնորդ էր ուղարկվում: Վերջինս կա-
րող էր լինել մոտիկ աղդական, քահանա և կամ
հատուկ հարսնախոս՝ «էլլի»: Սակայն պատահում
էր, որ աղջկա ծնողներն էին նախապես խոսք բաց
անում իրենց աղջկան կնություն տալու մասին և
էլլի ուղարկում տղայի ծնողների մոտ:

Ղզլարի հարուսար առավելությունը աալիս էր
իր դասակարգին: Մտավորականներից շաաերը
ձգում էին հարուսա աղջկա հետ ամուսնանալ,
իսկ վաճառականները և այդևտերերը այդ հա-
ցում հաշվի էին առնում իրենց առևտրական շա-
հերը:

Տարբեր ազգությունների և մանավանդ տար-
բեր կրոնների պատկանող անհասների միջև ամուսնությունը Ղզլարում չէր խրախուսվում:

Աղջկան ամուսնացնում էին 15—16 տարե-
կան (դեպքեր են եղել և 14 տարեկան) հասակում,
իսկ տղային ավելի ուշ, 20—22 տարեկան աանր
մնացած աղջիկը պառաված էր համարվում: Հա-
յերի կողմից աղջիկ փախցնելու դեպքեր Ղզլարում

չեն եղել: Չեն եղել և աղջիկ ծախելու դեպքեր:
Սակայն Ղզլարի պատմությունից հայտնի է, որ
քանիցս քաղաքի վրա հարձակում պործելուց հե-
տո լեռնական թալանչիները իրենց հետ պերի են
տարել Ղզլարի սիրուն աղջիկներին ու կանանց և
հարս դարձրել: Այսպես, 1831 թ. 2 հաղար ղին-
ված ձիավոր շեչեններ Ղաղի մոլլայի դխավո-
րությունը հարձակվում են Ղզլարի վրա, թալանի
ենթարկում քաղաքը և, շնայած մեծ կորուսա-
ներին, հարուստ ավարով ու զերիներով հեռանում
Դաղսաան:

Սովորություն կար մանկահասակներին օրո-
րոցում նշանելու: Հին բարեկամներն իրենց բա-
րեկամական կապերը ավելի ամրապնդելու նպա-
սակով, դեռևս օրորոցի մեջ տղային և աղջկան
նշանում էին և այդ օրվանից «խնամի» դառնում:
Իսկ ամուսնացնում էին այն ժամանակ, երբ եր-
կու սեռի երեխաները մեծանում էին:

Նշանդրեքը ամուսնության ամենակարևոր
պահն էր: Երկու կողմերի համաձայնությունից
հետո, մինչև նշանը, աղան էլլու միջոցով ոսկե
մատնի էր ուղարկում աղջկան, իրև զործի
սկիզբ, որպես դրավական այն բանի, որ
աղջիկն արդեն դրաված է: Այս դործողությունը
Ղզլարում կոչվում էր «բևլի»: Նշանի օրը աղա-
յի ծնողները քավորի և քահանայի միջոցով հար-
յի աուն էին ուղարկում մի մեծ տուփ, որի մեջ
լինում էր աղամանդներով դարձարված մաաանի
և 11 հատ վարաղած «ջավուղ»: Տուփը փաթա-
թում էին մետաքսե կարմիր թաչկինակի մեջ: Ի
պաասխան դրան, աղջկա կողմից փեսային ու-
ղարկվում էր 12 «ջավուղ»: Սա նշանակում էր, որ
տղան մինչև ամուսնանալը դեռ ամուրի, այ-
սինքն՝ կենտ է, իսկ աղջկա կողմից ուղարկված
12 ջավուղը նշանակում էր, որ իր ձեռքը ստանա-
լով, աղան արդեն զույգ ունի: Հարսն ու փեսան
նշանդրեքի առնահանդեսին շէին լմասնակցում:
Նշանից հետո երկու կողմերը համարվում էին
աղդականներ և ամեն կերպ օգնում էին միմյանց:

Հին ավանդույթով, աղան հարսի տունը շր-
պետք է դնար: Դա որոշ զոուջություն էր ջահել-
ների հավանական մերձեցմանը մինչև պսակը:
Նշանվածների ծածուկ տեսակցության փասաերը
երբեմն պատճառ են դարձել նշանի քանդման:
«Հարսանիքի դիջերը,—պատմում էր 90-ամյա Ս.
Պապովյանը,—երը նորափեսան, քավորը և փե-
սախպերը դալիս էին հարսին եկեղեցի տանելու,
հարսը երբեմն շէր իմանում, թե երեքից որն է իր

ամուսինը: Եվ սիւսն, երբ քստհանան եկեղեցո՞ւ մ միտցնում էր հարսի ու փեսայի ձեռքերը և ասում՝ «հնազանդ ես», տղջիկը հազիվ աչքի պոչով տեսնում էր փեսային»:

Ղլլարում հարսանիքը կատարում էին մինչև մեծ պասը, սկսելով շարաթվա ընդհանուր օրերից, բացի շար համարվող չորեքշաբթի օրվանից: Մեծ պասը վերջանալուց հետո նորից սկսում էին հարսանիքներ, բայց ոչ այն չափով, ինչպես ձմռանը: Ձմռանը ղլլարցիին աղաա էր այգեգործական աշխատանքներից, գինու վտճառքից նա փող էր ունենում: Հարսանիքները ձմռանը տևում էին երեք-չորս օր և կատարվում էին մեծ շուքով: Հարսանիքի պատրաստությունից առաջ պայմանավորվում էին ծախսերի մասին: Հարսանիքի պատրաստության մեջ էր մտնում նաև հյուրերը հրավիրելու գործը: Այգ նպասակով պատրաստում էին հրավիրատուներ, որոնց մեջ նշվում էր, թե որ եկեղեցում պիտի անելու ունենա պատկազրության հանգևը: Երբ հրավիրվող պարոնին ու տիկնոջը իրենց ներկայությունը հարգել պակի հանդեսը, հետո բարի լինել մասնակցելու հարսանյաց խորհուրդին, որը լինելու է նշված տանը: Հրավիրատուները շուտ անդ հասցնելու համար վաղձում էին ձիավոր ցրիչ: Հարսանիքի անցկացման համար ունևոր տներում վաղձում էին հմուտ խոհաբարներ, սպասավորներ ու երաժիշաներ: Պատրաստում էին տեսակ-տեսակ ուսեսաններ, անուշեններ, գինիներ, Ղլլարի կոնյակ ու շամպայն:

Հարսանիքից մի օր առաջ փեսան հարսի ասն էր ուղարկում մի մեծ թխոնչա: Դա մի կապոց էր, որի մեջ լինում էին նորահարսի պակի շորը, քողը, կոշիկները, սպիտակ ձեռնոցները, մոմից ջինված ծաղիկները, կեղոնները և երկու միջակ գլուխ շաքար: Ունևորները նվերներ էին ուղարկում նաև աղջկա ծնողներին: Ըստ հին ավանգույթի, Ղլլարում փեսան պարաավոր էր հարսին ոտքից մինչև գլուխ հագցնել:

Հարսանիքի պատրաստությունը սկսվում էր հարսին լողացնելու ծեսով: Այս առթիվ աղջկա առն էին գալիս մոտիկ ազգականները, իրենց հետ ընկնելով թիվածքներ: Այգ օրը փեսային նույնպես ածիում էին, շորերը և սպիտակեղենը արգուկում: Երկու կողմերի տներում ամեն ինչ կարգի էր բերվում, այն անկյունը, ուր պիտի գտնվեր նորահարսը, վաղապարում էին և վաղագույրը գարգարում զանազան թախամաններով ու հմայիլներով, որ նորահարսին շար աչք չգիպի:

Փեսան իր շախմարի համար ընարում էր ամուրի տղաներ, որոնք կոչվում էին «տղարներ»: Դրանց գլխավորում էր փեսայից: Քավորը և քավորկինը հարսանյաց ծեսերի առաջին ղեմքերն էին: Նույն քավորը ապագայում, երբ նորապսակների ընտանիքում երեխաներ էին ծնվում, գտնում էր նրանց կնքավորը (կնքահայրը): Այսպես քավորությունը անցնում էր սերնդից սերունդ: Այս աղագացությունը Ղլլարում շատ հարգված և ընդունված էր:

Նախքան փեսային հագցնելը նրա ղգեսար՝ գգակը, չուխան, արխալուղը, դոսին, խանչալը և այլն, գարսում էին հարսի շորերի հետ մատուցարանի վրա, որն օրհնում էր քստհանուն: Այս ծիսակատարությունից հետո փեսային ստիբելիս, հարսանեկտն շորերը հագցնելիս կատարում էին ձևականություններ, որոնք ուղեկցվում էին ներկաների սրախոսություններով, կատակներով ու բախ մթնուլորտում: Այս ամենից հետո փեսան, քավորը, փեստիպերը և աղարները՝ հարսանեկան ղգեստներով, սպիտակ ձեռնոցներով և սպիտակ ծաղիկները կրծքներին, նստում էին «ֆայտոն» և ուղեվորվում հարսի տուն: Ամրող ճանապարհին նրանց ուղեկցում էին երեխաները, իսկ հաստակավոր մարգիկ իրենց բարի ծախտներն ու բարեմաղթություններն էին հղում հարսանիքավորներին:

Կառքում՝ փեսայի աջ կողմում, որպես նրա պաշտպան, նստում էր քավորը, ձախ կողմում՝ փեսայից: Նրանց շրջապատում էին աղաբների խումբը: Առջևից կառքով գնում էր սաղանգարներ խումբը, որը շարունակ նվագում էր, շախմարի հետևից՝ ընդհանուր հյուրերը: Երբ առաջիններից մեկը պարելով ձևքերի վրա բարձր ընտանում էր հարսի շորերը: Երբ շախմարը մոտենում էր հարսի տանը, նրան ընգառաջ էին գալիս հարսի ծնողներն ու աղագականները: Քավորկինը երիասարղի ձեռքից իսկույն վերցնում էր հարսի շորերը:

Փեսան, քավորն ու փեսայիցը ներս էին մտնում և կանգնում վարագույրի առջև, որի հետևել նստած էր նորահարսը: Հարսի տանը թեյով, անուշեղենով, թիվածքներով հյուրասիրվելուց հետո հյուրերը ցրվում էին իրենց անկրը:

Մյուս, հիմնականում շարաթ, օրը հյուրերը նորից հավաքվում էին աղջկա ասնը: Ուր սպասում էին նրանց երաժշտությունը, պարերով: «Փեսան էկավ» կանչի վրա ընդորը նեավում էին ղեպի մուտքը: Ներս էր մանում նորափեսան իր

շքախմբով: Հնչում է երաժշտութիւնը: Վարագուց-
րի հետևում սկսվում էր նորահարսի ղզեսաավոր-
ման ծեսը: Նախ հարգարում էին նրա մաղերը,
որոնք քոզի տակից բարակ հյուսերով իջնում էին
ուսերին ու մեջքին: Գլխին դրում էին այուլի քողը,
որն ամրացվում էր աղամանդյա քորոցով: Մե-
տաքսյա սպիտակ շորը իջնում էր մինչև ոտքերը:
Ոտներին հագնում էին զեղեցիկ սպիտակ կոշիկ-
ներ, րարծր կրունկներով, մեջքին կապում ար-
ծաթազարդ դոտի, մասնները զարդարում ոսկե
մատանիներով, բազուկը՝ ապարանջանով, ականջ-
ները՝ օղերով, վիզը զեղեցիկ մարգարտաշոր
մանյակով:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, հարսին հանում
էին վարագուցի եակից և կանգնեցնում փեսայի
աջ կողմը: Հյուրերը հնաաբրբորությամբ ղննում էին
նորահարսին: Արտասուքը աչքերին հարսը հրա-
ժեշտ էր տալիս ծնողներին ու հարազատներին: Նա
ընդմիջա թողնում էր հայրական տունը...

Բոլորը գուրս էին դալիս. նորապսակները նրս-
տում էին շքեղ կառք. նրանց դեմ առ դեմ նստում
էին երկու պատանիներ, որոնցից մեկը մեծ մա-
սամբ հարսի եղբայրը: Նրանց ձեռքերին են վառ-
վող կերտները: Հյուրերը նույնպես կառք նստած
ուղեկցում էին նորապսակներին դեպի եկեղեցի:

Ամբողջ ճանապարհը՝ աղջկա անից մինչև
եկեղեցի և եկեղեցուց մինչև փեսայի առնը, շքա-
խմբի երթը ուղեկցվում էր նվաղով, կրողով ու պա-
րով: Երբեմն աղայի կամ աղջկա թշնամիները
հանկարծ մի անկյունից հարձակվում, կարում
էին շքերթի ճանապարհը և աուրուզմիտց, ծեծ-
կրոտուք սարքում, նավթոտ ավել նեատում հարսի
ու փեսայի կառքի աակ, սև կատու ըաց թողնում,
որ իրրև նոր ղուլգերի րախտը կտրեն և այլն:
Սակայն ազտպներն էլ իրենց հերթին հրացաննե-
րից կրակում էին, աղաղակում, որ փախցնեն շար
ողիններին, վախեցնեն շարամիաներին:

Նորապսակներին եկեղեցու շամքին ղիմավո-
րում էր քահանան իր տիրացուի հետ: Սեղանի
մոտ քահանան հարս սև փեսայի ղլուխները մո-
տեցնում էր միմյանց, խաշը դնում ղլխներին և տ-
ղոթք կարդում: Հետո քահանան ըոնում էր փեսա-
յի աջը և հարսի ձախ ձեռքը ու իրար միացնելով,
ասում՝ «Առյալ ղձեռն Եվայի և ավյալ ի ձեռն Ա-
ղամա...»: Սրանով սկսվում էր պսակի արարո-
ղութիւնը: Քավորն ու փեսախակը հարս ու փե-
սայի ղլխին ըոնում էին երկու թագ, իսկ քահա-
նան նրանց վղերից կախում էր մկաաքսյա թելև-

րից հյուսված կանաչ-կարմիր նարոտը, որը հա-
մերաշխության իորհրդանշան է: Նարոտի ծայ-
րերն իրար էին կպցնում մոմով: Սյուսեհեակ քս-
հանան րարծր ձայնով հարցնում էր փեսային՝
«որդիս, մինչև քո կյանքի վերջը տե՞ր ես հար-
սին»: Փեսան պատասխանում է՝ «այո», որից հե-
տո հարցնում էր հարսին՝ «Դուսար իմ, մինչև քո
կյանքի վերջը հնազա՞նդ ես քո տմուսնունս:
Հարսը ի նշան հնազանդության ղլուխը խոնաո-
հում էր: Հետո քահանան վերցնում էր դինու րա-
ժակը և տալիս խմելու նախ փեսային, ապա հար-
սին:

Վերջում քահանան շնորհավորում էր նորա-
պսակներին, ասելով՝ «մի րարծի ձեռանաք, պա-
րի սհաթի իլի», որով և վերջանում էր պսակա-
ղության ծեսը: Սկսվում էին շնորհավորանքներ,
համրույրներ, աչքալուսանքներ:

Հնում եկեղեցուց գուրս ղալիս սովորութիւն
կար նորապսակների ղլխավերում սպիտակ ա-
ղավիններ արձակել և արծաթե ղրամ շաղ աալ:
Փեսայի տունը շհասած, նորապսակներին ղիմա-
վորում էին քայլերդով: Քավորը գոան վերեր
«խանշալով» խաշ էր դծում, իսկ նորափեսան
շեմքում ղրած ափսեն ջարդում էր ոտքի հարվա-
ծով, ի նշան այն րանի, որ նա ընտանիքի ղը-
լուխն ու պաշապանն է: Ներսում նրանց ղիմավո-
րում էր փեսայի մայրը՝ օրհնելով ու համբուրելով
աղայի ու աղջկա թշերը, նրանց աշքերջուր» հը-
րամցնում և ղլխների վրա խոնկ ծխում:

Փեսան, հարսը, քավորն ու փեսախակը
կանգնում էին ասն ձակաամասում, նրանց
առշև ըերում էին սպիտակ սփոոցով սեղան՝ վը-
րան դաաարկ մատուցարտն: Աղղականներից
մեկը կանգնում էր հարսի ու փեսայի մոտ, ձեո-
քում ըոնած խոշոր րաժակներով ուրիշ մատուցա-
րան: Մի-մի րաժակ աալիս էին հարսին ու փեսա-
յին: Հանգեսը սկսվում էր: Հյուրերը հերթով
մոտենում էին նորապսակներին և շամպայնով
փրփրացող րաժակով շնորհավորում՝ ապալի սհա-
թի իլի, միասին պաոավեք, րտխաավոր իլեքս:
Յուրաքանչյուրը մի որևէ նվեր է դնում սեղանի
մատուցարանի վրա՝ թեյի արծաթյա սպասք, ոս-
կեղեն, արծաթյա իրեր. և այլն: Յուրաքանչյուր
րաժակի վրա երաժշտութիւնը աուշ էր նվա-
ղում:

Այնուհեակ մի սենյակում սկսվում էին պա-
րերը, մյուսում՝ թղթախաղը, երրորդում՝ կանայք,

տանտիկնոջ հրավերով թեյ էին խմում, թխվածք-
ներ ու անուշեղեն ճաշակում:

Վերջապես զայիս էր ընթրիքի ժամը: Պարերը,
թզթախազը, ամեն ինչ գազարում էր: Խնջուլքի սե-
ղանները սպասում էին հյուրերին: Թաղավորն ու
թագուհին (փեսան և հարսը) գրադեցնում էին սե-
ղանի վերին գլուխը, նրանց ծնողները, քավորը,
փեսախապերը, քավորկիները և մյուսները գրավում
էին փրենց հասկացված տեղերը հարս ու փեսա-
յի մոտ: Բոլոր օրերի խնջուլքի սեղանները դե-
կավարելու համար ընարում էին փսրձված թամա-
զա (դուխրաշի):

Առաջին բաժակը խմում էին հարս ու փեսա-
յի պատվին: Բոլորը վեր էին կենում և սկսվում
էին բարեմտղթությունները: Այնուհետև խմում էին
ծնողների կենացը, հերթով բոլոր հյուրերի կե-
նացը, Իրար եակից բերում էին աաք-տաք ճաշեր,
խորաիկներ, եփած կարմիր ձուկ, աապակած վա-
ռեկներ, աղըմով փլավ», հնդկահավի աապական
և այլն²:

Ներկաների կենացից հետո, թամազան առտ-
ջարկում էր խմել բացակաների կենացը՝ «Չնա-
յած նրանք այս ժամին այստեղ չեն, բայց սրտե-
րով մեզ մոտ են»: Հետո խմում էին ճանապար-
հում դանվողների կենացը, որ նրանք ողջ-առողջ
աեղ հասնեն և դրժներն էլ աաջողակ» լինի: Խմում
էին սիրահարվածների կենացը, նաև վերացական
կենացներ: Օրինակ, հյուրերից մեկը առաջարկում
է Արեգակի կենացը՝ «Ձէ որ նա սաղ աղխարհին
կյանք տվողն ա, թե որ նրա կենացը չսմեք, նա
մեր վրեն կհրսվի (կրարկանա) և լույս չի տա»,
լուսնի կենացը և այլն:

Ընդունված էր, որ հարսի հեա փեսայի
տուն էին դնում հարսի ընկերուհիները, իսկ աղ-
դականները մնում էին աղջկա աանը: Այդ դի-
շերը մեծ քեֆ էին անում և աղայի և աղջկա
աանը: Եթե աղջկա ծնողները չքավոր էին, քեֆ
չէին սարքում, այլ միայն թեթև հյուրասիրություն:
Սակայն փեսան անպայման քեֆ պեաք է սար-
քեր, դպրարցիներին դարմացներ, թեկուղ և մեծ
պարաքելով:

² Սովորություն կար (հարսանիքներին, քեֆերին), երբ
սեղանին մատուցվում էր հնդկահավը, որևէ մեկը կաաակի
համար կարում էր «կուր-կուրի» հետուլքամաը և թղթի մեջ
փաթաթած ծածուկ դնում հյուրերից որևէ մեկի գրպանը:
Քիչ ժամանակ անց հայտարարում էին, թե տնհետացել է
հնդկահավի այդ մասը, ում գրպանից որ դուրս էր գալիս
այն, նա պարաավորվում էր մոտ ժամանակներում քեֆ
կազմակերպել և ներկաներին իր տուն հրավիրել:

Հարսանիքը վերջանալուց հետո, երբ հյու-
րերը ուրախ տրամադրությամբ ցրվում էին, նո-
րապասակները առանձնանում էին և մտնում առա-
գաստ: Հարսի ավագ քույրը, նախքան այդ, որոշ
խրատներ էր տալիս քրոջը՝ փեսայի ծնողների և
ընտանիքի մյուս անդամների նկատմամբ վերա-
բերմունքի շուրջ և այլն:

Նորապասակների համար նախօրոք պատրաս-
տում էին մաքուր անկողին, իսկ անկողնու մոտ
դնում անուշեղեն: Կար հարսի կուսությունը ըս-
աուգելու սովորություն: Առավոտյան, երբ նորա-
պասակներն արթնանում էին, հարսի քույրը առա-
ջինն էր մտնում ներս և արարի լույս» ասելով,
հավաքում իր ձեռքով փուած սավանը, որի վրա
պեաք է լիներ կուսության նշանը: Այն իսկույն
ցույց էր արվում փեսայի մորը: Սա շնորհավո-
րում էր հարսին և համբուրելով ասում՝ «Շաա
ապրես աղջիկս, նամուդ պահել եա»: Դրանից
հետո նշանով սավանը փաթաթում էին մի շորի
մեջ և մի մորթած հավի հեա ուղարկում աղջկա
մորը աղբալուսանք: Ի պաաասխան դրան, հարսի
մայրը փեսայի աուն էր ուղարկում ոըշաա-հալ-
վա, որը խորհրդանիշ էր նորապասակների քաղցր
կյանք ունենալու:

Եթե պաաահում էր, որ աղջիկը պույս չէր լի-
նում, նրան անպատվում էին և մեծ մասամբ եա
ուղարկում հորանց աուն՝ հետը դնելով բերած
րածիները:

Հարսանիքից մի շարաթ անց հարսի ծնող-
ները խնամապաաիվ» էին սարքում ի պատիվ
խնամիների: Պաաասխան-պաաավասիրություն կա-
աաըում էին նաև փեսայի ծնողները:

Հարսը ամուսնու աանը սկզբում ծանր դըր-
ծեր չէր կատարում, լվանում էր ամուսնու և նրա
ծնողների ոաները, աունն էր մաքըում, ջուր բե-
րում, լվացք անում և այլն: Ըսա հին սովորության
հարսը ընաանիքի անդամների հեա չէր խոսում:
Նա խոսում էր միայն իր ամուսնու հեա, երբ ա-
ոանձին էին: Խոսում էին երբեմն նաև աան փոք-
րերի, սկեսրոջ հետ, իսկ սկեսրայրի հեա խոսելն
ընդունված չէր, արտահայտվում էին միայն գլխի
գրական կամ բացասական շարժումներով:

Հայ լուսավորչական եկեղեցու օրենքով, ա-
պահարդան չէր թուլյաաըվում, նույնիսկ եթե կինը
աշորամեջք» (չբեր) էր: Այդպիսի դեպքում հարսը
դիմում էր իր հաըաղաա մորը և օդնություն խընդ-
րում: Մայրը և աատը դիմում էին դանաղան մի-
ջոցների, աղջկա մեջքին աքիլա» էին դցում, ոըը

շատ ցավոտ է եղել, ուխտ էին անում, սրբերին նվերներ խոստանում, գրրացի դիմում, «կիր» տնում և այլն:

Մի շաբաթ անց, նորապսակները հրավերներ էին ստանում իրենց մոտիկ աղղականներից, ինչպես ասում էին Ղզլարում, «ղոնաղլուղներ» էին սարքվում նորապսակների և խնամիների պտտվին:

Բաժինք: Ազգա քրաժինքը (օժիտը) բաղկացած էր լինում կենցաղային անհրաժեշտ իրերից: Բաժինքի մեջ մտնում էին երկու մեառալ մահճակալ, անկողնու բոլոր պարադաները, շորի պահարան, իրերով լի սնդուկ, մեկ կամ մի քանի խալի, զկոմոդ, ճաշի և թեյի ամանեղեն, երբեմն և անասուններ՝ կով, դոմեշ, ձի, կառք և այլն:

Տղաքերք և կնուկ: Ղզլարում սակավ էին ամուրիները, այդպիսիներին Ղզլարում անվանում էին «չորակլոխներ»: Նույն մականունը դնում էին և նրանց, ովքեր ամուսնացած էին, բայց երեխա չունեին: Երեխա փշացնելը համարում էին ասածու հակառակ դորժ, պառավները ասում էին՝ «երևալա փշացնողը շաա մենձ մեղկ ա կործում, նրանից աստված խոռով ա կամ և էլի երեխա չի ասած»:

Ղզլարում երեխաներ շաա էին ունենում, մինչև 10—12, մանավանդ չքավոր բնաանիքները: Երեխան ապաղա օղնական էր դիտվում, աշխատող ձեռք: Այդ առթիվ ասում էին՝ «էհ, բալամ, էտ պանը մեր կամքից տուս ա, ասածու տվածն ա»:

Հդի կնոջը (կամ պատճառավորին) ամեն ինչ ուսեցնում էին և սախպում ասանը դորժ անել, շատ շարժվել, որ հեշա ազատվի: Միայն չէր թուլլաարվում ծանր իրեր բարձրացնել, սենյակում մենակ մնալ կամ մութ դիշերով դուրս գալ, որ «չարքերը շխարհեն»: Մեծ կանայք դանաղան նշաններով աշխատում էին դուշակել ապաղա երեխայի սեռը, այսպես՝ եթե ծննդկանի փորը հավաք է, երեխան աղա կլինի, եթե փոված՝ աղջիկ կծնվի և այլն:

Երկունքի ցավերով բոնված ծննդկանին «օղենելու», ծննդարհրությունը «հեշատցենելու» նպասակով, ասան մեծահասակ կանայք ավյալ սենյակի դռները և բոլոր փակ իրերը՝ պահարանները, դզրոցներն ու արկղները բաց էին անում, բարձի տակ որևէ սառը մետաղ՝ դանակ կամ խանչալ ու ավեաարան էին դնում և այլն: Մնունդի և երևալալի ուշացման դեպքում, ըսա հին սովորության,

հրացանից կրակում էին, որի ձայնից պետք է ծննդկանը «վախենար» և իսկույն ազատվեր: Ազոթում էին՝ «Մեղա քեզ տեր, մեղա քեզ: Չար աչքը կրակն ինդնի, վառվի: Սուրը Գրիդոր Լուսավորիչը քեզի պահապան լինի, շար աչքից, շար լեզուից, շար սհաթից ազատի, շար աչկը կրակն ինդնի, խորովվի: Ամեն»:

Տղամարզկանց ներկայությունը այդտեղ արդեված էր: Երեխային ընդունելուց հետո, տամերը նրան ադում էր: Աղը համարվում էր առողջարար միջոց և պաշապան «չար ողիներից»: Երեխայի ծնվելուց հետո, «մանկական ընկերք» թաղում էին բակի մի անկյունում, որ մարդու ոտք չդիպչի: Մննդկանին պառկեցնում էին անկողնում և խնամում ինչպես հիվանդի: Կարած պորտը փաթաթում էին և յոթ օր պահում ասանը, որից հետո նեաում էին հոսող շորի մեջ: Տամերը շտապում էր ավետել հարաղաաներին, որ աշխարհ է եկել ընտանիքի նոր անդամը, որի համար նա վարձաարվում էր: Տղայի ծնունդը ընդունվում էր մեծ ցնծությամբ:

Հնում աղա զավակի ծնունդը ավետում էին հրացանաձուլությամբ:

Մննդկանը քառասուն օր արևի լույս չպեսք է աեսներ: Մինչև քառասունքը ծննդկանին ասանը մենակ չէին թողնում, որ «չարքերը ներս չմրանեն և չվախեցնեն նրան»: Չկնքված երեխային անմաքուր էին համարում, դրա համար էլ չէին հանդաանում, մինչև երեխային չմկրակեն: Հայրը նորածին երեխային չէր մոանում և չէր գըրկում մինչև նրա կնքվելը: Երեխայի մկրտությունը Ղզլարում որոշակի ժամանակ չուներ:

Կնունքը կաաարվում էր եկեղեցում: Սակայն նաև երեխայի ասանը, որպիսի գիշումը արվում էր հաակապես ունեոր ծխականներին: Այդպիսի դեպքերում լողավաղանը եկեղեցուց ասնում էին նորածնի տունը: Մկրտության արարողության ժամանակ քավորը (կնքավորը) երեխային վերցնում էր իր թևերի վրա, քահանան աղոթք էր անում, հանում երեխայի շորերը, դնում ավտղանն ու լողացնում: Ջուրն անշուշա տաք պիսի լինելու Լողարանից հանելով, քահանան երեխային դնում էր քավորի ձեռքերին փոած մաքուր սավանի վրա, որով իսկույն բարուրում են փոքրիկին: Մկրտող քահանան վերցնում էր մեռոնի աուփը և աշ ձեռքի երկու մասներով խաչածե քսում մանկան ճակատին, ափերի մեջ, կրծքին, ոտքերի աակ, մեջքին, թիկունքին և ամեն անդամ հաաուկ աղոթք

ասում: Այնուհետեւ, քահանան վերցնում էր քա-
վորի բերած նարոտը, օրհնում և օղակածե անց-
կացնում մանկան վիզը: Նարոտը ռազկացած էր
կարմիր և կանաչ գույնի մետաքսաթելերից: Կար-
միր թելը նշանակում էր կյանք, կտնաչը՝ սերնդի
շարունակութուն: Երեխային լողավտղանում
մկրտելիս, հին սովորութեամբ, ավաղտնի մեջ մե-
տաղյա դրամ էին զցում, որը նորածնին «չարի-
րից» ազատ պահելու հնարներից մեկն էր:

Երեխային եկեղեցի տանելու ժամանակ, եթե
հանապարհին բործրաստիճան պաշտոնյա կամ
հարուստ մարդ էր պատահում, ասում էին՝ «երե-
խան մեծ կամ հարուստ մարդ կլինի», իսկ ազ-
քատ մտրդու պատահելիս, ասում էին՝ «երեխտն
աղքատ կլինի»: Նրանց վերադարձին անհամբեր
սպասում էին տանը: Երբ քավորն ու քահանան
ներս էին մտնում, քավորը տատմոր ձեռքից
վերցնում էր նորածնին և մոտենում երեխայի մոր
անկողնուն: Նա մորն էր հանձնում երեխային,
մանկան վրա զցում էր թանկագին շորացու՝ նը-
վեր-աչքալուսանք ծննդկանին: Շուրջը հավաքված
մոտիկ ազգականները, ներկաները շնորհավորում
էին և նվերներ տալիս նրան: Հյուրերին պատվում
էին ճոխ ճաշով: Չկնքված երեխաների մահվան
դեպքում, նրանց թաղում էին առանց արարողու-
թյունների:

Որպեսզի երեխային «չար աչք» չկալի, նրա
օրորոցից կախում էին զանազան հմայիլներ, իսկ
երեխայի վզից՝ խաչ և «աչքահանուկ»: Աչքից
հիվանդացած երեխային բժշկում էին պառավ կա-
նայք, նրանք յոթն անգամ «Հայր մեր» էին կար-
դում, սե կոթով զանակի վրա երեք անգամ թքում
ու քսում մանկան ճակատին, ազոթում: Այդ դա-
նակը դնում էին երեխայի դլիտի տակ, իսկ մյուս
օրը շուրն էին զցում: Եթե մի օտար մարդ մաներ
ու երեխային օրորոցում տեսներ, նրա դնալուց
հետո շեմքի հողից վերցնում ու քսում էին երե-
խայի ճակատին, իրեն այդ մարդու աչքը խա-
փանելու համար:

Ծննդկանին ուտեցնում էին մեղրով ու դար-
չինով պատրաստած խավիժ: Դրա մասին այն
կարծիքը կար, որ այն ուժեղ սնունդ է: Ծննդ-
կանի կաթը ավելացնելու նպատակով նրան
տալիս էին կովի կամ դոմեշի կաթ ու անուշ շուր:
Կաթի պակասութեան դեպքում վարձում էին ծրծ-
մայր: Աովորարար սրանք շատ էին մերձենում
մանկանը և ապադայում դրեթե ասրերութուն
չէին դնում սրանց և հարազատ երեխայի միջև:

Կրծքի կաթը ցտմաքեցնելու համար մայրը ռս-
տինքները պինդ կապում էր: Երբ երեխան քիչ մե-
ծտնում էր, նրան տալիս էին շաքարաջրով խառը
կովի կաթ և թրջած պաքսիմատ: Մայրը իր երե-
խային կերտկրում էր երկար ժամանակ՝ 2—3
տարի: Այն հետապնդում էր նաև շահիանալու
նպատակ: Երեխային կրծքից հարելու համար դա-
նազան միջոցների էին դիմում: Ընդունված էր
կրծքին սրճի թտնձրոնք կամ դառը խինին քսելը,
որից երեխան զզվում էր և դադարում ծծելուց: Դի-
մում էին և այլ միջոցի. մայրը մի քանի օրով
զնում էր իր հորանց տուն, և երեխան մոր սախնքը
մոռանում էր:

Երեխային լողացնում էին օրընդմեջ, ռացի
չորեքշաբթի ու կիրակի օրերից: Երբ երեխտն ա-
ռաջին ատամն էր հանում, սկսուողը հրավիրում
էր մոտիկ ռարեկամներին, նրանց ներկայութեամբ
փոքրիկին նստեցնում հտտակին փռած դորգին և
պնակով դիմացը դնում շաքարով և շամիչով քաղց-
րացրտծ խաշտծ ցորենի հտտիկներ: Բտցի այդ,
երեխայի ապազան դուշակելու համար, նրա առևե
դնում էին զանազան իրեր՝ գիրք, մատիտ, մկրատ,
մատնոց և այլն: Երեխային շրջապատողներն ու-
շի-ուշով հետևում էին, թե երեխան այդ առար-
կաներից որը կրնտրի ու կվերցնի իր թաթիկնե-
րով: Եթե փոքրիկը վերցնում էր մկրատ կամ
մատնոց, ասում էին դերձակ կլինի, իսկ եթե մա-
տիտ կամ գիրք՝ ուսումով մարդ, վարժապետ կամ
դրող: Երկար ժամանակ շխոսող երեխային աա-
նում էին եկեղեցի, ազոթում էին և սրբերից մեկի
առաջ կախում արծաթե լեղու այն հուլսով, որ
երեխան շուտով պիտի խոսի: Երեխայի առաջին
խտղալիքներն էին՝ վեղը, դնդակը, աիկնիկը, շը-
նիկը և այլն:

Ծննդարերութունից հետո մայրը քառասուն
օր ոչ մի ռանի ձեռք չպիտի տար: Հին սովորու-
թեամբ, քառասուն օրվա ընթացքում հարսին շէր
թուլլատրվում խմոր հոնցել, կերակուր պատ-
րասաել, որովհետև նրան անմաքուր էին համա-
րում: Քառասունքը լրանալուց հետո հարսին լո-
ղացնում էին, 40 հացի դալով շուր շափում ու
լցնում էին նրա վրա, որից հետո նրան ուղար-
կում էին եկեղեցի, որ մի դուլդ մոմ վտոի ու փա-
րատվի: Այդ ըուրը ծեսերից հետո միայն նրան
թուլլատրվում էր ճաշ պատրասաել, խմոր հոնցել
և այլն:

Երեխային մկրաելիս, նրան որեէ անուն էին
տալիս: Այդ անելիս քահանան մեծ մասամբ

նկատի էր ունենում ծնողների ցանկութունը և եկեղեցական օրոքոցը: Հին սովորությամբ հայ ընտանիքում առաջնեկ աղային աալիս էին պապի անունը, իսկ աղջիկ երեխային՝ աաաի անունը: Հաջորդ երեխաներին անվանում էին այն սրբի անունով, որի անվանակոչությանն էր համընկնում այդ շարաթվա օրերից մեկը: Գրանով պեաք է միայն ըացատրել այն փասար, որ Ղզլարում շատ էին Աննա, Մարիամ, Օվաննա, Գրիգոր, Մկրտիչ, Կարապետ, Օվաննա, Սարգիս և այլ անուններ և, ընդհակառակը, ավելի քիչ՝ Վարդան, Գուրգեն, Հրայր, Տիգրան, Անահիտ, Գոհար և և այլ անուններ:

Հիվանդություն և բժշկություն: Հնում Ղզլարում բժիշկներ չկային: Հիվանդությունները բուժում էին ժողովրդական հեքիմները, որոնք դիտեին շատ ու շատ բույսերի բուժիչ հատկությունները և գրանց հյութերից պարաստում էին զանազան դեղեր: Հեքիմների գիտությունը ժառանգարար անցնում էր սերունդներին: Նրանց դիտելիքներն ու ձեռք բերած փորձը այսօր էլ հեաաքրբրում և օդնում են բժշկական գիտությանը:

Հեքիմները բուժում էին զանազան վերքեր, կտորվածքներ, անդամալուծություն, ներվային հիվանդություններ, կանացի հիվանդություններ և այլն: Ժողովրդական բժշկության մեջ օդտադործվում էին զանազան բույսեր, տիզմի տեսակներ, խաշիլներ, քսուքներ, ազրուկներ, օձի և մեզվի թույն և այլն: Սակայն մի շարք հիվանդություններ, պարզ է, չէին բուժվում, այդ պեպքում մարդիկ ճարահաաայալ դիմում էին զբրրացների ու ֆալլիների:

Ղզլարում և շրջանում ամենաաարածված ու ամենադաժան հիվանդությունը «դոզցոցն» էր (մալարիա): Մինչև 1919 թ. Ղզլարում բժշկական հսկողություն դրեթե չկար: Վաա էր քաղաքի սանիտարական վիճակը: Իր հուշատեարում Լև Նիկոլակիչ Տոլստոյը (1851—53 թթ.) նշում է, թե ինչպես մեկ օր նա իրեն վաա է զգացել ու դիմել է բժշկի: Նրա համար դժվարությամբ է Ղզլարում բժիշկ ճարվել, որի մասին նա գրում է՝ «Բժիշկը տգետի մեկն էր, ըայց նա ուզեց ցույց տալ, որ ինքը դիտակ է»: Ամեն աարի կրկնվող շրհոեղեղների հեաեանքով Ղզլարի մոաակայքում աոաշանում էին բազմաթիվ ճահիճներ, որոնք մալարիայի տարածման պատճառ էին դառնում ողշ շրջանում:

1887 թ. «Терские ведомости»-ի համա-

ձայն Ղզլարում ծնվածների թիվը հասնում էր տարեկան 274-ի, մեաածներինը՝ 439: Մեկ ուրիշ փասաաթղթի՝ բժշկապես Ռոմանոս Միշվելյանի արձանագրության տվյալները հետևյալն են.

թվականներ	1890	1892	1899
ծնվածներ	193	227	309 հոգի
վախճանվածներ	335	441	499 հոգի

Տվյալներից երևում է, որ Ղզլարի ընակչությունը աաաիճանական ոչնչացման վաանդի առջև է կանգնած եղել: Միայն սովետական կարգերը (1919 թ.) կանխեցին այդ աղեար: Շաապ միջոցներ ձեռնարկվեց թե՛ բժշկական և թե՛ սանիտարական ուղությամբ, որոնց շնորհիվ կարճ ժամանակում Ղզլարում և շրջանում մալարիան վերացավ:

Անցյալ դարի 60-ական թվականներից մինչև մեր դարի սկիզբը Ղզլարում նշանավոր բժիշկներ են եղել Անանիա Սուլթան շահր և Մարտիրոս Դուգյանը: Անցյալ դարի 80-ական թվականներից մինչև 1920 թվականը Ղզլարում գործել են նաև զինվորական բժիշկ Գոդկրգյանը, մանկարարձուհի Օվստենա Սուլթանյանը և հայտնի բժշկապետ Ռոմտնոս Միշվելյանը, որը ջանք չի խնայել փոքրի շատե բարելավելու աոողապահական դործը: Նրա ջանքերով 1890-ական թվականին Ղզլարում բացվեց ժողովրդական հիվանդանոց, ուր սպասարկումը անվճար էր:

